ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1964 Общественные науки

Ս. Ս. Ավանեսով

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Պանթուրքիզմն ու թուրքիզմը կրոնական, քաղաքական և շովինիստական հոսանքի միևնույն շղթայի տարբեր օղակներն են։ Այն ծնվել է 1912—1913 թթ., Բալկանյան պատերազմի ժամանակ՝ որպես «երիտթուրքական» պարտիայի գաղափարախոսություն, իսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դարձավ Թուրքիայի բուրժուա-կալվածատիրական շրջանների գաղափարախոսությունը։ Իսլամ դավանող երկրներում պանթուրքական կազմակերպությունները ծառայում էին տիրապետող դասակարգերի շահագործողական, ագրեսիվ և շովինիստական նպատակներին։ Այդ երկրներում ազգային բուրժուազիայի իշխանության գլուխ անցնելը չի ոչնչացրել պանթուրքական ինստիտուտները։ Ընդհակառակը, դրանք շարունակվում են օգտագործվել ամենաակտիվ կերպով։ Թուրքական համեմատաբար թույլ բուրժուազիան քաղաքական և տնտեսական անզորության հետևանքով, ձգտում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը օգտագործել լայնածավալ մահմեդական աշխարհի վրա իր ազդեցությունը տարածելու, վաճառահանման նոր շուկաներ և էժան հումք ձեռք բերելու համար։ Իր իմպերիալիստական նպատակները նա քողարկում է թրքախոս բոլոր ժողովուրդներին Թուրքիայի հովանու տակ միավորելու շղարշով։

Պանթուրքիզմի հիմնադիրներ Ջելալէդդին Աֆղանին, Ջեմալ Նուրին, Ալի Քեմալ բեյը, Թեքին Ալպը պատմությունը կեղծելու ճանապարհով ձգտում էին ապացուցել թրքախոս բոլոր ժողովուրդների «ազգային միասնության» և մյուս ժողովուրդների նկատմամբ նրանց «ռասսայական գերազանցության» իրենց թեզը և դրանով իսկ հիմնավորել ազգային փոքրամասնություններին կեղեքելու քաղաքականությունը, արդարացնել հարևան ժողովուրդների հանդեպ Թուրքիայի բուրժուա-կալվածատիրական կառավարող շրջանների փայփայած նվաճողական պլանները։

Հայտնի է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան, իբրև Գերմանիայի կողմնակից, պատերազմում էր Ռուսաստանի դեմ։ Պատերազմի մեջ մտնելու նախօրյակին պանթուրքիստները ամբողջ աշխարհի մահմեդականներին դիմեցին «Սրբազան պատերազմը պարտադիր է» կոչով, որտեղ առաջարկվում էր պայքարել իսլամ դավանող և անհավատների հրնշմանը ենթակա մահմեդական ժողովուրդների ազատագրության համար։ Ավելին. դուրանից արված մեջբերումը ուղղակի պահանջում էր ամենուրեք սպանել, ոչնչացնել անհավատներին։

Թուրքիայի պայմաններում այդ նշանակում էր՝ հայ, հույն, հրեա և ոչ մահմեդական մյուս ժողովուրդների ֆիզիկական ոչնչացում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ պլանի ակտիվ քարոզիչներն էին

թուրքական կալվածատերերի և ազգային բուրժուազիայի ներկայացուցիչները՝ երիտթուրքերը, որոնք հետապնդում էին նաև Ղրիմը, Կովկասը, Անդրկովկասը, Աստրախանը, Կազանը և Միջին Ասիան նվաճելու ցնորամիտ նպատակներ։

1911 թ. երիտթուրքերի կողմից ստեղծված «Թուրք օջախներ» ընկերությունը և նրա տպագիր օրգան՝ «Թուրք յուրդու» («Թուրքական հայրենիք») ամսագիրը դարձան պանթուրքակուն գործունեության կենտրոն։ «Թուրք յուրդուն» ռեակցիոն պրոպագանդա էր մղում Չինաստանից մինչև Դանուբ ապրող թրքախոս բոլոր ժողովուրդների «միևնույն ազգին» պատկանելու մասին, ժողովուրդներ, որոնք պետք է միավորվեին «թուրքական մեծ պետության» մեջ՝ Թուրքիայի գլխավորությամբ։ Բանը հասավ պանթուրքականների կողմից նույնիսկ «Մեծ Թուրանի» ստեղծման պլան կազմելուն, պլան, որն ընդգրկում էր ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները, Սառուցյալ օվկիանոսից մինչև Տիբեթի սարահարթը, Բայկալից մինչև Ստամբուլ և Մոնղոլիայից մինչև Կաղան ընկած տերիտորիաները։ Ըստ էության դա համաշխարհային տիրապետության հաստատման ցնորամիտ մի պլան էր, որի իրականացման փորձը պետք է առաջ բերեր արյունալի պատերազմների ու արշավանքների մի ամբողջ ժամանակաշրջան։ Պանթուրքականները չէին թաքցնում, որ այդ պլանը պետք է իրականացվի «հրի ու սրի»[1] օգնությամբ և որ թրքախոս մյուս բոլոր ժողովուրդները պետք է կուրորեն ենթարկվեն օսմանյան թուրքերի կամքին, այսինքն թուրքական տիրապետող դասակարգերի ձեռքին դառնան զենք՝ նրանց նվաճողական պլաններն իրականացնելու գործում։

Թվում էր, թե սուլթանատի և խալիֆաթի վերացումը և Թուրքիայում հանրապետության հռչակումը 1923 թ. կբարելավի երկրում ապրող ազգային փոքրամասնությունների վիճակը։ Սակայն իշխանության գլուխ անցած ազգային բուրժուազիան, քեմալականների գլխավորությամբ, իր նախորդ երիտթուրքերից ժառանգեց թուրքիզմն ու պանթուրքիզմը։ Եթե երիտթուրքերի ժամանակ պանթուրքական գաղափարախոսության տարածման կենտրոնը «Թուրք օջախներն» էին, ապա այժմ այդ ֆունկցիաները սկսեցին իրականացնել «Ժողովրդական տները» («Հալք էվլերի»)։ Սրանք դեպի ազգային փոքրամասնությունները ատելություն սերմանելու, նրանց գոյությունը բացառելու ոգով պրոպագանդիստական լայն գործունեություն էին ծավալել երիտասարդ սերնդի շրջանում։ Այդ իր արտահայտությունը գտավ թուրքական կառավարության պաշտոնական փաստաթղթերում, սահմանադրության մեջ, վիճակագրական հաշվետվություններում, գրականության մեջ և Թուրքիայի պաշտոնական անձանց ելույթներում։

Արդեն քեմալական շարժման ընթացքում վճռական հարվածներ հասցրվեցին հայերի և քրդերի՝ անկախություն ձեռք բերելու ձգտումներին, իսկ 1923 թ. Լոզանի պայմանագիրը վերջնականապես վերացրեց այդ հարցի առթիվ Թուրքիայի նախկինում ստանձնած պարտավորությունները։ Անդրադառնալով հայերին ազգային օջախ տալու պահանջներին, Քեմալ Աթաթուրքը 1923 թ. Բուրսայում հայտարարեց. «Այդ մասին մենք նույնիսկ չենք էլ

[1] «Краткие сообщения Института востоковедения АН СССР», т. XXII, М. 1956, стр. 69.

խոսի...»[2]։ Լոզանի պայմանագրի 33—44-րդ հոդվածների համաձայն[3] Թուրքական կառավարությունը պարտավորվում էր երկրի բոլոր բնակիչների համար, առանց ծագման, ազգության, լեզվի, ռասայի կամ կրոնի տարբերության՝ ապահովել կյանքի ու ազատության լրիվ և կատարյալ պաշտպանություն։ Ոչ-Թուրքական փոքրամասնություններին տրվում էին երաշխիքներ՝ «օգտվելու քաղաքացիական ու քաղաքական հենց այն իրավունքներից, ինչ մահմեդականները» (հոդված 39), «...իրենց հաշվին վարել և վերահսկել բարեգործական, կրոնական կամ հասարակական բոլոր տեսակի հիմնարկները, դպրոցները, ուսումնական ու դաստիարակչական հաստատությունները՝ դրանցում մայրենի լեզվից ազատ կերպով օգտվելու և իրենց կրոնը ազատորեն դավանելու իրավունքով» (հոդ. 40) և այլն։

Թուրքական կառավարող շրջանների ստանձնած այս պարտավորություններն անկատար մնացին։ Ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանք շարունակեցին իրականացնել լրիվ խտրականության, նրանց իրավունքների սահմանափակման, հետապնդումների, վերաբնակեցման և ջարդերի քաղաքականություն։ Շուտով հայտարարվեց, թե Թուրքիայում առհասարակ ազգային փոքրամասնություններ չկան և, որ այդ երկրում միայն Թուրքեր են ապրում։

Ինչպես բացահայտորեն խոստովանեց լուսավորության նախկին մինիստրը Համդուլլա Սուբխի-բեյը, 1924 թ. սահմանադրության 88-րդ հոդվածի նպատակն էր հայերին և հույներին դուրս շպրտել հասարակական բոլոր հիմնարկներից և ստիպել ազգային փոքրամասնություններին հրաժարվելու իրենց դպրոցներից ու մայրենի լեզվից[4]։

1928 թ. Թուրքիայում հրատարակվում է № 1312 օրենքը, որի 4-րդ հոդվածի համաձայն «1929 թ. հունվարի 1-ից Թուրքիայի հողի վրա օտարերկրացուց (այլազգուց) ծնված երեխան համարվում էր Թուրք»[5]։

Թուրքական կառավարող շրջանների շովինիստական քաղաքականությունը իր արտահայտությունն է գտել ժողովրդա-հանրապետական պարտիայի ծրագրում, որն ընդունվել է 1931 թ. 3-րդ համագումարում։

Թուրքական կառավարության ղեկավարները 1930-ական թ. ասում էին. «Մենք բացահայտ նացիոնալիստներ ենք։ Նացիոնալիզմը մեր գործունեության միակ գործոնն է։ Ինչ գնով էլ լինի մենք պետք է Թուրքացնենք բոլոր նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»[6]։ Այս ամենը ոչ այլ ինչ է, քան Թուրքիզմի բացահայտ դրսևորում, շովինիստական բուրժուազիայի սպառնալիք՝ բռնի Թուրքացնելու բոլոր ոչ-Թուրքերին։ Բուրժուազիայի ներկայացուցիչները բացահայտ կոչ էին անում ֆիզիկական դատաստան տեսնել ոչ-Թուրքերի նկատմամբ։ Իր որդուն տված հոգևոր կտակի մեջ հայտնի պանթուրքիստ Ն. Ադսզը գրել է. «Ազգ, դա նշանակում է արյուն, դրա համար էլ ոչ-Թուրք ռասայի մարդկանց Թուրք մի՛ համարիր։ Թող նրանք բացի Թուրքե-

---

[2] Atatürkün söylev ve demeçleri, cilt 2, Ankara, 1946, s. 68.

[3] Տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», под ред. проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабанина, Литиздат, НКИД, М., 1927, стр. 68.

[4] 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումից հետո 1961 թ. վերջին ընդունված նոր սահմանադրության մեջ այս կապակցությամբ ոչ մի փոփոխություն չկա։

[5] „Belediye ve köylerimizin kitabı", Ankara, 1932, s. 865.

[6] «Новый Восток», кн. 16—17, 1926, М., стр. 180.

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

բենից ոչ մի այլ լեզու չիմանան. միևնույնն է մի հավատա նրանց։ Ոչնչացրու նրանց, հանուն դրան վտանգի տակ դնելով նույնիսկ կյանքդ»[7]։

Թուրքիայի արդարադատության մինիստր Մահմուդ Էսադը 1930 թ. հայտարարեց. «Մենք ապրում ենք Թուրքիայում՝ ամենաազատ երկրում։ Թուրքը միակ տնօրենն է, միակ տերը երկրում։ Այն մարդիկ, որոնք ըստ ծագման մաքուր Թուրքեր չեն, այդ երկրում միայն մի իրավունք ունեն՝ ծառա դառնալու, ստրկանալու։ Եվ թող այդ ճշմարտությունն իմանա և՛ բարեկամը, և թշնամին, թող այն իմանան նույնիսկ լեռները»[8]։

Թուրքական ղեկավարներն ամեն կերպ ձգտել են Թուրքին դարձնել սահմանափակ, նեղ մտածող նացիոնալիստ, նրանք հաճախ կոչ են արել ատելությամբ վերաբերվել մյուս ժողովուրդներին, Թուրքի մեջ դաստիարակել ուրիշների նկատմամբ ունեցած ռասիստական զգացմունքներ։

Թուրքական նացիոնալիզմը իր մեջ մարմնավորում է Թուրքական ազգության բացառիկության գաղափարը։ Արևելյան Անատոլիայի շատ շրջաններում, հատկապես սահմանամերձ գոտում, կարելի է հանդիպել այսպիսի պլակատների. «Մարդը հպարտանում է իրեն Թուրք անվանելով», «Մարտում Թուրքը բոլոր ժողովուրդներից ամենախիզախն է»[9]։

Կասկածից վեր է, որ Թուրքական բուրժուազիան իր շովինիստական և նացիոնալիստական գաղափարախոսությամբ մթագնում է Թուրքիայի աշխատավոր զանգվածների դասակարգային գիտակցությունը, շովինիստական ատելություն սերմանում այլ ազգությունների նկատմամբ։

Թուրքական կառավարության ազգային քաղաքականության ռեակցիոն բնույթը երևում է ազգային փոքրամասնությունների համար նստակեցության սահմանների մասին օրենքից[10], որը հայերին արգելում էր բնակվել Սամսուն—Սելեվկիա գծից արևելք, արաբներին՝ Սիրիային և Միջագետքին սահմանակից վիլայեթներում, վրացիներին՝ Ռիզէի վիլայեթում և Արդահանի շրջանում, իսկ հույներին թույլատրում էր բնակվել միայն Ստամբուլում։ Քաղաքներում (բացի Ստամբուլից) ոչ-Թուրքական ազգերը բնակչության տասը տոկոսից ավելի չպետք է կազմեին։

1930 թ. Թուրքական մամուլը լայն կամպանիա ծավալեց պահանջելով ազգային փոքրամասնություններից՝ հրաժարվել իրենց լեզվից, մշակույթից, չունենալ իրենց հասարակական կազմակերպությունները, նրանց թույլ չտալ պետական ծառայության մեջ մտնելու։ 1930 թ. փետրվարին Ադանայում Մուստաֆա Քեմալը հայտարարեց, թե «իրեն Թուրք համարող յուրաքանչյուր ոք պետք է խոսի Թուրքերեն։ Չի կարելի հավատ ընծայել այն մարդկանց հայտարարություններին, ովքեր չխոսելով Թուրքերեն՝ ձգտում են դառնալ Թուրքական ընտանիքի անդամ։ Ադանայում ավելի քան 20.000 մարդ (ակնարկում էր հայերին և հույներին—Ս. Ա.) չի խոսում Թուրքերեն։ Ինչպիսի՞ հետևանքներ

---

[7] «Вестник АН СССР», № 8, 1949, стр. 101—102.

[8] „Millivet", 19. IX. 1930.

[9] Kinross Lord, Impression of recent visit to Turkey.— „Asian review", London, January, 1955, vol. 51, Nr. 185. p. 61.

[10] Տե՛ս Д. Завриев. К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, стр. 130—131.

դա կարող է ունենալ։ Մարդկանց այդ ամբողջ կատեգորիան մեր դեմ է... այդ տարրերից պետք է իսկական թուրքեր պատրաստել»[11]։

1932 թ. թուրքական կառավարությունը նոր քայլեր ձեռնարկեց ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնելու ուղղությամբ։ Ամռանը մեջլիսը նախապատրաստեց օրինագիծ նստակեցության մասին, որը հիմնականում ուղղված էր քրդերի դեմ, բայց նրանում կային հոդվածներ, որոնք վերաբերում էին հայերին, հույներին, հրեաներին և այլոց։ Այսպես, օրինագծում ասվում է. «Նրանք, որոնց մայրենի լեզուն թուրքերենը չէ, իրավունք չունեն նոր թաղամասեր, գյուղեր հիմնել կամ միատեսակ արհեստավորների խմբեր կազմել։ Հետևապես, նրանք, որոնց լեզուն թուրքերեն չէ, չեն կարող արհեստն ու արդյունաբերությունը դարձնել իրենց սեփական մենաշնորհը... Նման միությունները ենթակա են ցրման...»[12]։

Հրշյալ օրենքը զուտ դասակարգային բովանդակություն ուներ և ամբողջապես ուղղված էր երկրում թուրքական ազգային բուրժուազիայի տիրապետության հաստատման նպատակին։

Վերջապես 1942 թ. նոյեմբերի 11-ին թուրքական մեջլիսը ընդունեց հարկային օրենքը (№ 4305)՝ «varlik vergisi» (ունեցվածքային հարկ) անունով, որը հիմնականում ուղղված էր ազգային փոքրամասնությունների դեմ։ Եթե վերջիններս ի վիճակի չէին հարկ վճարել, ապա զրկվում էին իրենց շարժական և անշարժ գույքից։

Անդրադառնալով այդ օրենքին, «Նյու-Յորք Թայմս» թերթի թղթակից Սուլցբերգերը գրում էր. «Քրիստոնյաներն ու հրեաները, որոնք հանդիսանում են թուրքական քաղաքացիներ, մի քանի անգամ ավելի են հարկադրված, քան մահմեդական-թուրքերը»[13]։ Ելնելով օտարերկրյա առևտրական պալատի հաշվետվությունից, Սուլցբերգերը հաստատում է. որ առևտրական թուրքը, որպես հարկ պետք է վճարեր իր տարեկան եկամուտի 4,7 տոկոսը, հույնը՝ 156, հրեան՝ 179, հայը՝ 232 տոկոսը»[14]։ «Վարլիկ Վերգիսի» օրենքի գործադրման հետևանքով պետական գանձարանը մտավ 317,5 միլիոն լիր[15]։ Թուրք գրող Ֆահիկ Օկտան այդ օրենքն անվանեց «կորզման հրեշավոր մտքի վերջին մանիֆեստացիա»[16]։

Թուրքական կառավարության ներքին քաղաքականության ռեակցիոն բովանդակությունը սերտորեն միահյուսվում էր նրա արտաքին քաղաքական ագրեսիվ կուրսի հետ։

Պանթուրքիզմի՝ Անդրկովկասի, Միջին Ասիայի ու Ղրիմի նկատմամբ ունեցած նվաճողական պլանների իրականացման գաղափարներով Թուրքիայի կառավարող շրջանները ղեկավարվում էին նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ։ Պանթուրքականները 1942—43 թթ. երազում էին հարձակվել ՍՍՌՄ-ի վրա և իրագործել Սովետական Միու-

---

[11] Տե՛ս Б. Данциг, Турция, Воениздат, М., 1949, стр. 131.

[12] «Հայրենիք», № 9 (117), LX, հուլիս, 1932, Բոստոն, էջ 167։

[13] „The New York times", 11. IX. 1943.

[14] Նույն տեղում։

[15] „T. C. Merkez bankası", 72/73, 1950. s. 213.

[16] Falk Ökte. Varlık vergisi fagiası, Istanbul. 1949. s. 31.

թյան բոլոր մահմեդական ժողովուրդներին Թուրքիայի հովանու տակ միավորելու բախտախնդիր պլանը։

Իր իշխանության տարիներին (1923—1950 թթ.) ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիան խրախուսում էր պանթուրքական գրականության հրատարակումը։ 1944 թ. փետրվարին Ստամբուլում լույս տեսավ Հուսեյն Նամիք Օրկունի գիրքը՝ «Թուրքերն ամբողջ աշխարհում» վերտառությամբ։ Աշխատության գլուխների վերնագրերը արդեն վկայում են նրա պանթուրքական բնույթը։ Դրանք են՝ 1. Սիբիրի թուրքերը, 2. Միջինասիական թուրքերը, 3. Իթիլի (Վոլգայի) թուրքերը, 4. Ղրիմի թուրքերը, 5. Ադրբեջանական թուրքերը, 6. Արևմտյան թուրքերը։ Հեղինակը երկրագնդի տարբեր մասերի թուրքերին միանալու կոչ է անում։ Նրա մոտ յակուտները սիբիրյան թուրքեր են, թուրքմենները, ուզբեկները և ուրիշները՝ միջինասիական թուրքեր, թաթարները՝ Կազանի թուրքերը, բաշկիրները, չուվաշները և մյուսները՝ Իթիլյան թուրքեր և այլն։ Գրքի վերջում հեղինակը հայտարարում է. «Թուրք, էլ ի՞նչ ասեմ քեզ։ Այս գրքից դու տեսնում ես, որ դու ապրում ես միլիոնավոր թուրքերի մեջ, ուր ապրում է 18 միլիոնանոց թուրք ազգը։ Դու տեսնում ես, որ միակ անկախ թուրքական երկիրը քո երկիրն է։ Դե ամուր կապվիր քո երկրին և մտածիր այն մասին, թե ինչպես այն մեծացնել։ Ճանաչիր քո ցեղն ու ցեղակիցներին։ Մի մոռանա, որ դու միայն 18 միլիոն չես։ Քո բոլոր գիտելիքները, խելքը, ուժը տուր թուրքերի բարձրացմանը, ոչ մի ակնթարթ հիշողությունից դ մի հանիր հետևյալ կանոնը՝ «Ամեն ինչ թուրքի համար»։

Պանթուրքական, հակասովետական նպատակների է ծառայում նաև Հ. Ն. Օրկունի մյուս գիրքը՝ «Թուրքիզմի պատմությունը»։ Այդ գրքի գլխավոր թեզը այն բանի հաստատումն է, թե աշխարհում բնակվող «թուրքական» բոլոր ժողովուրդները երբեմնի եղել են ամբողջական, քաղաքական անբաժանելի մի միություն և այդ ժողովուրդների միջև գոյություն է ունեցել և շարունակում է գոյություն ունենալ արյան, լեզվի և կուլտուրայի ընդհանրություն։ Հեղինակը ձգտում է ապացուցել, որ Ղրիմի, Ադրբեջանի ու Միջին Ասիայի ժողովուրդների գիտությունը, կուլտուրան, գրականությունը և քաղաքական, ռազմական ու հասարակական աշքի ընկնող գործիչները իրենց վրա կրում են օսմանյան ապա նաև՝ անատոլիական Թուրքիայի ազդեցությունը։

1944 թ. հունվարին Ստամբուլում լույս տեսավ Օգուզ Թյուրքկանի «Նացիոնալիզմի ճանապարհին» գիրքը, որտեղ թուրքիզմի տեսական հիմնավորման փորձեր են կատարված։ Այդ առթիվ հեղինակը գրում է հետևյալը. 1. Թուրքիզմին հատուկ է ազնվությունը, նա գիտե թուրքական արյան արժեքը։ Ի ծնե թուրքերը տաղանդավոր են, խելացի, խիզախ են և հերոսական։ Թուրքիզմը թուրքերի ռասան համարում է ամենաբարձրը։ Ռասիզմը թուրքիզմի սկզբունքներից մեկն է։ Դա պայմանավորված է բիոլոգիական և պատմական պատճառներով։ 2. Թուրքիզմը, ինչպես և ամեն մի նացիոնալիզմ, հետապնդում է ազգային միության գաղափար։ Թուրքական ազգը կազմում են Թուրքիայից դուրս ապրող 65 միլիոն թուրքերը, որոնք ապրում են Բուլղարիայից մինչև Ալթայան լեռներն ընկած լայնածավալ տարածության վրա։ Ազգային միության այդ սկզբունքը միայն ռասայական տեսու-

թյան վրա չի հենվում. այն իր մեջ ընդգրկում է նաև կրոնի, հավատի, պատմության և ավանդությունների միասնությունը։ Տարաբախտ դեպքերն ու քաղաքական իրադարձությունները բաժանել են թուրքերին։ Բայց այդ բաժանումը չի ստիպի մեզ հրաժարվել միասնական միության մեր գաղափարից, ընդհակառակը լոկ խրախուսում է իրագործելու այն։

Թյուրքկանը խոնարհվում է երիտասարդության ֆաշիստական դաստիարակման առաջ։ Որպես օրինակ՝ նա բերում է ճապոնական ֆաշիզմը՝ «Հիշեցեք, թե ինչ է ասում ճապոնացին իր որդուն. միայն Ճապոնիան, ամեն ինչ Ճապոնիայի համար»։ Իսկ ի՞նչ է ասում գերմանացի հայրը իր որդուն՝ թող քո ամբողջ միտքն ու աշխատանքը ուղղված լինեն Գերմանիան ամեն ինչից վեր է գաղափարին։ —Եվ ահա, այդ ձևով դաստիարակված պատանիները նվաճեցին Ֆրանսիան և ստեղծեցին ուժի, տնտեսության, արդյունաբերության և գիտության գծով առաջին երկիրը»։

Այդպես է դիմում Թյուրքկանը թուրքական երիտասարդությանը։ Նա կուզենար նրան տեսնել այնպիսին, ինչպիսին ճապոնական և գերմանական ֆաշիստներն էին, կցանկանար նրանց տանել նվաճողական պատերազմների ճանապարհով՝ «Մեծ Թուրքիա» ստեղծելու համար։

Հետպատերազմյան Թուրքիայում նկատելի դարձավ ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված կամպանիայի ուժեղացումը։ 1958 թ. փետրվարին Ստամբուլի «Հյուրիեթ» թերթի աշխատակից Սելչուկ Ջանթարլին հանդես եկավ ազգային փոքրամասնությունների և հատկապես հայերի դեմ ուղղված հոդվածներով[17]։ Նա ազգային փոքրամասնությունները համարում է Թուրքիայի համար վտանգավոր տարրեր և կոչ է անում երկրի կյանքում նրանց դերը ոչնչի հավասարեցնել, լրիվ թուրքացնել կամ երկրից արտաքսել։

Թուրքական թերթերում պատահում են հոդվածներ, որոնցում փորձեր են կատարվում ապացուցելու, թե չի եղել և գոյություն չունի, ասենք, այնպիսի ժողովուրդ, ինչպիսին հայերն ու քրդերն են, թե հայերը երբեք չեն ունեցել իրենց պետականությունը, մշակույթը, սեփական լեզուն, իրենց պատմությունը։ Ինչ վերաբերում է մուսուլմանական ազգային փոքրամասնություններին՝ քրդերին, ալբանացիներին, չերքեզներին և ուրիշներին, ապա նրանք առհասարակ ազգային փոքրամասնություններ չեն համարվում և լրիվ չափով վերաբերում են «Թուրքի որդին՝ թուրք է» կատեգորիային։

Այդպիսի քաղաքականության հետևանքով է, որ խիստ իրավազուրկ և ծանր դրության մեջ են գտնվում ազգային փոքրամասնությունները Թուրքիայում։ Այդ կարելի է տեսնել թեկուզ քրդերի՝ Թուրքիայի ամենամեծ ազգային փոքրամասնության, օրինակով։ Քրդերի թիվն այստեղ մոտ 4 միլիոն է։ Դարերի ընթացքում քրդերը հանդիսացել են թուրքական կառավարող շրջանների ասիմիլյացիայի և ֆիզիկական ոչնչացման օբյեկտը։ Քրդերի ազգային ինքնակիտակցությունը արհամարհվում է. նրանք չեն ճանաչվում իբրև ինքնուրույն էթնիկական միավորում, նրանց հետապնդել են սուլթանների օրոք, երիտթուրքերի և քեմալականների ժամանակ, հետապնդում են նաև այժմ։

Քրդական հարցը լուրջ խնդիր է թուրքական կառավարության համար, որը ձգտում է ինչ գնով էլ լինի այն լուծել։ Քրդական ժողովրդի մի շարք

---

[17] „Hürriyet", 13. 2. 1958, 17. 3. 1958.

խոշոր ապստամբությունները[18], որոնք ցնցեցին բուրժուական-կալվածատիրական կարգի հիմքերը Թուրքիայում, կարծես թե առիթ ծառայեցին այն լանին, որպեսզի թուրքական իշխանությունները հրով ու սրով «լուծեին» նաև քրդական խնդիրը։

Քրդական շարժումը ճնշելու նպատակով թուրքական զորքերի գործողություններից հետո, 1938 թ. Ջելալ Բայարը լինելով ներքին գործերի մինիստրը՝ հայտարարեց, թե «Թուրքիայում այլևս քրդական հարց չկա»[19]։ Այդ ժամանակվանից ի վեր դեպքից-դեպք քրդերին հիշում են իբրև «լեռնային թուրքերի»[20]։ «Թուրքիայում,—գրել է «Սոն պոստա» թերթը,—երբեք չի եղել քրդական փոքրամասնություն՝ ոչ քոչվոր, ոչ նստակյաց, ոչ գիտակից, ոչ էլ անգիտակից»[21]։ Թուրքական հանրագիտարանը հաստատում է. «Թուրքական ռեսպուբլիկայի քրդերի մեծամասնությունը խոսում է թուրքերեն և ապրում է թուրքերի նման։ Մենք. թուրքերս, նրանց չենք համարում այլ ազգության պատկանողներ»[22]։

Թուրքական կառավարող շրջանների՝ դեպի ազգային փոքրամասնությունները տածած ատելությունը երևան էր գալիս ամեն մի քայլափոխում։ Քրդերին նրանք կոչում էին վայրենիներ, կիսամարդիկ, իսկ լազերին առհասարակ մարդ չէին համարում։ Թուրքիայում տարածված ասույթ է.

«Կենդանիներից ամենաստորն է ղազը
մարդկանցից ամենաստորն է լազը»[23]։

Բայար-Մենդերեսի տիրապետության ժամանակ Թուրքիայում բացահայտ կերպով լույս էր տեսնում պանթուրքական գրականություն։ 1957 թ. Ստամբուլում լույս է տեսնում Իկբալ Հիքմեթի «Թուրքիան կբարձրանա և Թուրքերը առաջավոր ազգ կդառնան» գիրքը[24], իսկ Անկարայում, 1958 թ. Էմին Էրիշիրգելի «Թուրքիայի դարաշրջանը՝ նացիոնալիզմի դարաշրջան է, հումանիզմի դարաշրջան»[25] գիրքը։ Երկու գրքերն էլ գրված են ծայրահեղ շովինիզմի, ռասիզմի, դեպի մյուս և հատկապես սովետական ազգերը տածվող նացիոնալիզմի ոգով։

---

[18] Նկատի ունենք 1925—27, 1930—32, 1937—38 թթ. ապստամբությունները։

[19] „Cumhuriyet", 30. VI. 1938.

[20] Kimhe John. Seven fallen pillars, The Middle East, 1945–1952, London, 1953, p. 140.

[21] „Son posta", 11. IX. 1946.

[22] Hayat ansiklopedesi, cilt 7, Istanbul. 1933, s. 2266.

[23] „Новый Восток". кн. 1-ая (7), Москва, 1925, стр. 122.
Թուրքերեն այդ այսպես է հնչում.

„Hayvanın en aşağısı kaz
İnsanın en aşağısı laz"

[24] Hikmet Ikbal, Türkiye yükselecek ve türkler örnek bir millet olacaklardır, Istanbul, 1957, s. 102.

[25] Emin Erişirgil, Türkçülük devri-milliyetçilik devri, insanlik devri. Ankara, 1958, s. 148.

Հիքմեթ Իկբալը իր գրքում բացահայտ կոչ է անում պայքարել կոմունիզմի դեմ։ Դրանումն է նա տեսնում Թուրքիայի «բարձրացման» անհրաժեշտ պայմաններից մեկը։ Հեղինակը կոչ է անում վերադառնալ դեպի կրոնը, երիտասարդությանը դաստիարակել պանիսլամիզմի ոգով, առաջարկում է մզկիթ հաճախել։

Պանթուրքականները, Բայար-Մենդերեսի կառավարության և ամերիկյան իմպերիալիստների ակտիվ պաշտպանությամբ, աշխուժացրեցին իրենց պրոպագանդան։ Հենց Բայար-Մենդերեսի կառավարման տարիներին էր, որ հայտնի պանթուրքիստ Գյոքսելի[26] գիրքը երեք հրատարակություն ունեցավ (1952, 1955 և 1959 թթ.)։ Նրանում հեղինակը դիմում է պանթուրքիզմի ղեկավար գաղափարախոսներից մեկի՝ Զիյա Գյոքալփի բանաստեղծություններին, որոնք արտահայտում են երիտթուրքերի նվաճողական ձգտումները և ներծծված են ատելության ոգով մասնավորապես դեպի ռուս ժողովուրդը։

Պանթուրքականների երկերի պրոպագանդման և մասսայականացման գծով թուրքական կառավարող շրջաններից ետ չմնացին նաև ամերիկյան հրատարակիչները։ 1959 թ. անգլերեն թարգմանվել և լույս է տեսել նույն Զիյա Գյոքալփի «Թուրքական նացիոնալիզմը և արևմտյան քաղաքակրթությունը» գիրքը[27]։

Ուրիել Հեյդը իր «Թուրքական նացիոնալիզմի հիմունքները. Զիյա Գյոքալփի կյանքը և ուսմունքը» գրքում հաստատում է, որ Գյոքալփի ուսմունքը կազմում է «...ժամանակակից թուրքական կարգի տեսական հիմքը»[28]։

Պանթուրքիզմի պրոպագանդան հատկապես ուժեղացավ 50-ական թվականներից։

1955 թ. մարտին Ստամբուլում, Մենդերեսի կառավարության թույլտրվությամբ, տեղի ունեցավ թուրքական վտարանդիների և վերաբնակիչների, այսպես կոչված, առաջին կոնգրեսը։ Կոնգրեսում ծավալվեց պանթուրքական ամենաանսանձ պրոպագանդա։ Կոնգրեսի ամբիոնից կրկին ձայներ էին լսվում Թուրքիայի սահմանների ընդլայնման, նրա սահմաններից դուրս ապրող «թուրք եղբայրների ազատագրության» մասին։ Կոնգրեսի մասնակիցները մի անգամ ևս հիշեցին «Մեծ Թուրքիայի» սահմանները, որոնք իբրև թե ընդգրկում էին Կովկասը, Միջին Ասիան, Մերձվոլգյան շրջանները և Բրքախոս ժողովուրդներով բնակեցված այլ տերիտորիաներ։ Հատկանշական է, որ պանթուրքական կոնգրեսի մասնակիցները իրենց ֆեդերացիայի պատվավոր նախագահ ընտրեցին Թուրքիայի այն ժամանակվա պրեմիեր-մինիստր Ադնան Մենդերեսին։

Հարկ է նշել, որ պանթուրքականների գործունեության հակասովետական ուղղությունը, որը խրախուսվում և պաշտպանություն էր գտնում կառավարող դեմոկրատական պարտիայի (1950—1960 թթ.) կողմից, մեծ դեր խաղաց սովետա-թուրքական հարաբերությունների վատթարացման գործում, մի բան, որ ձեռնտու էր ամերիկյան իմպերիալիստներին ու նրանց թուրքական դրածո-

---

[26] Տե՛ս Göksel A. N., Ziya Gökalp, hayatı; sanatı, eseri, Istanbul, 1959.

[27] Տե՛ս Gökalp Z. Turkish nationalism and western civilization. New York, 1959.

[28] Uriel Heyd. Foundation of turkish nationalism. The life and teaching of Ziya Gökalp. London, 1950, p. 169—170.

ներին և, իհարկե, հակասում էր թուրք աշխատավոր ժողովրդի ազգային շահերին։

1960 թ. մայիսի 27-ին տեղի ունեցած իշխանության փոփոխությունը չփոխեց դրությունը՝ ոչ արտաքին և ոչ էլ ներքին քաղաքականության մեջ։ Հավատարմությունը դեպի ագրեսիվ դաշինքները, որոնց մեջ մտնում է Թուրքիան և որի մասին հաճույքով հայտարարել է Թուրքիայի այժմյան պրեզիդենտ Ջեմալ Գյուրսելը, հանդիսանում է վերևում ասածի վառ ապացույցը։

Թուրքիայի դաշինքը ՆԱՏՕ-ի և ՍԷՆՏՕ-ի ագրեսիվ բլոկների հետ, թուրքական ղեկավար շրջանների նվաճողական պլանները՝ կոնկրետ Կիպրոսի վերաբերյալ, պանթուրքիստների կրքերի բորբոքման Թուրքիայի սահմանները մինչև Վոլգայի ափերը և նրանից այն կողմ ընդարձակելու պլանների առաջ քաշման սնունդն են հանդիսանում։ Այդ բորբոքումներն այնպիսի ծավալ են ընդունում, որ լուրջ վնաս են հասցնում սովետա-թուրքական դրացիական հարաբերություններին։ Այդ հարցի վրա վերջերս ուշադրություն դարձրեց սովետական մամուլը։ Օրինակ, «Լիտերատուրնայա գազետան» այս առիթով նշում է հետևյալը.

«Իզմիրում հրատարակվող «Ադալեթ» թուրքական թերթը մոտ օրերս գրում էր. «Կիպրոսն առաջինն ու վերջինը չե». Վերնագիրը հստակապատասխանում է բովանդակությանը՝ հոդվածը կոչ է անում Կիպրոսի հետ միասին Ղրիմի, Թուրքմենիայի, Ադրբեջանի և Սովետական Միության մի շարք հանրապետությունների «ազատագրումը»։ Թուրքիայի մայրաքաղաք Անկարայից լուր է ստացվել ինչ որ Ալի Աքիշի գրքի հրատարակման մասին հետևյալ ավելի ուշագրավ՝ «Իթիլ—Ուրալի պրոբլեմը և սովետական իմպերիալիզմը» վերնագրով։

Ինքնըստինքյան այդ վերնագիրը հիմք է տալիս ենթադրելու, որ հեղինակը շոշափում է էական և հրատապ մի պրոբլեմ։ Պետք է արդյո՞ք, որ Սովետական Միությանը պատկանեն Վոլգայից այն կողմ գտնվող հողերը (Իթիլը՝ դա Վոլգան է), ժամանակը չէ արդյո՞ք դրանք «ազատել», «վերադարձնել» Թուրքիայի Օսմանյան կայսրությանը»[29]։

Պանթուրքական պլանների իրագործումը թուրքական ղեկավար շրջանները կցանկանային սկսել Կիպրոսից, որը նրանք համարում են Թուրքիայի անբաժանելի մասը։ Կիպրոսցիների ձգտումները լիարժեք ազատության և անկախության համար, Մաքարիոսի կառավարության ձգտումները հանրապետության ինքնապաշտպանության ուժեղացման և կղզում նորմալ դրություն ստեղծելու համար չեն բավարարում Թուրքիայի և ՆԱՏՕ-ի ղեկավարությանը։ Նրանք պրովոկացիոն աղմուկ են բարձրացնում իբր թե այդ ձեռնարկումները ինչ որ սպառնալիք են հանդիսանում թուրք-կիպրոսցիների համար, հետապնդելով Կիպրոսի ներքին գործերին Թուրքիայի ռազմական միջամտության նպատակ։ Այդ մասին է վկայում Թուրքիայի պրեմիեր-մինիստր Իսմեթ Ինենուի 1964 թ. հունիսի 5-ի հայտարարությունը այն մասին, որ Կիպրոսի հարցը չհաջողվեց լուծել խաղաղ միջոցների օգնությամբ և Թուրքիան պարտավորվեց Կիպրոսի թուրքական համայնքի «պաշտպանությունը» վերցնել իր վրա[30]։ Այլ կերպ ասած թուրքական պրեմիերը սպառնում է թուրքա-

---

29 «Литературная газета», 13 февраля 1964 г.

30 «Правда», 8 июня 1964 г.

կան զորքերի ներխուժմամբ Կիպրոս կղզին, կիպրոսցի թուրքերին «փրկության» պատրվակով, որոնց ոչ մի վտանգ չի սպառնում, ընդհակառակը հենց իրենք են նախաձեռնում Կիպրոսի արյունահեղությունները՝ հանուն թուրքական կառավարող շրջանների պանթուրքական գաղափարների իրականացման։

Հատկանշական է, որ անկախության համար պայքարող կիպրոսցիների դեմ Թուրքիայի զորքերի ռազմական ինտերվենցիային օգնելու համար հանդես են գալիս պանթուրքիստների վաղեմի համակրողներ՝ արևմտա-գերմանական միլիտարիստները, հատկապես հետախուզական տխրահռչակ «Գելենի կազմակերպությունը»։ Այս տարվա հունվարին թուրքական տեռորիստների կարիքների համար Կիլից Կիպրոս է ուղարկված զենքի և պայթուցիկ նյութերի բազմատոննանոց մի բեռ[31]։ Բոնը վերականգնել է դեռևս Հիտլերյան ժամանակաշրջանի տրադիցիոն կապերը թուրքական հետախուզության հետ։ Հայտնի է, որ Անկարայում հիտլերական դեսպան ֆոն Պապենը ակտիվ կապեր է պահպանել պանթուրքիստների հետ, նույնիսկ ֆինանսավորելով նրանց։ Այսօր Բոնը ռազմական օգնություն է տրամադրում Անկարային (50 միլիոն արևմտա-գերմանական մարկա)։ Այսպիսով, Բոնը ակտիվորեն աջակցում է թուրքական կառավարող շրջանների միլիտարիստական ձգտումներին, դրանով իսկ ուրախություն պատճառելով պանթուրքիստներին, որոնք երազում են Բոսֆորից-Ալթայ մեծ թուրքական կայսրության մասին։

Թուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականության զարգացման նման ուղին նրան կարող է կանգնեցնել կործանման առջև։

Միայն սոցիալական խոր փոփոխությունները կարող են լուծել ազատության, հավասարության և դեմոկրատիայի հարցերը։ Դա գիտակցում են որոշ շրջաններ նաև Թուրքիայում։ «Ե՞րբ ենք մենք վերջապես, հասկանալու, որ Թուրքիայում գոյություն ունեցող սոցիալական կառուցվածքը աննորմալ է, որ մեզ մոտ չկան բարիքների բաշխման հավասարություն և արդարություն, և որ այստեղից բխում են մեր բոլոր սոցիալական և քաղաքական անհամապատասխանությունները»[32]։ Այսպես է ասում թուրք ժուռնալիստ Ֆաքիր Բայքուրթը՝ թուրքական «Ֆորում» հանդեսի 1960 թ. հուլիսի 1-ի համարում տպագրված իր հոդվածում։ Ապա հեղինակը մատնանշում է, թե Թուրքիայում կան սոցիալական այնպիսի հիվանդություններ, որոնք ոչ մի կապ չունեն օրենքի հետ, որոնց արմատներն ավելի խորն են և որոնք իրենց լուծմանն են սպասում։ Քանի դրանք կլինեն, մեր սոցիալական կառուցվածքը չի կարելի արագ ամրապնդել ու կայունացնել։ Եվ եթե մենք նույնիսկ կարգավորենք զեկավարությունը, ապա մեզանում ամեն ինչ կլինի, բացի դեմոկրատիայից»[33]։

Թուրքիայի ժամանակակից կառավարող շրջանների ազգային քաղաքականությունը ամենայն ակնհայտությամբ ցույց է տալիս, որ թուրքիզմն ու պանթուրքիզմը Թուրքիայի զարգացման բոլոր էտապներում մշտապես զենք են հանդիսացել տիրապետող դասակարգերի ձեռքին ոչ-թուրք ժողովուրդների կեղեքման, ճնշման ու ֆիզիկական բնաջնջման, ինչպես նաև թուրք ժողովրդին սոցիալական պայքարից հեռու պահելու համար։

---

31 Տե՛ս «Азия и Африка сегодня», 5 мая, 1964, стр. 56.

32 «Новое время», № 36, 2 сентября 1960, стр. 15.

33 Նույն տեղում։

С. С. Аванесов

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ ПРАВЯЩИХ КРУГОВ ТУРЦИИ

Резюме

В данной статье рассматриваются вопросы, связанные с национальной политикой правящих кругов современной Турции. На основе фактического материала, приводимого в статье, показывается, что турецкая буржуазия и ее правящая верхушка в своей политике в отношении нетурецких народов, живущих на территории Турции, руководствуются реакционной идеологией тюркизма и пантюркизма. Приводятся факты политической дискриминации национальных меньшинств, их отуречивания, непризнания, преследования и даже физической расправы в республиканской Турции.

Пантюркизм служит агрессивным целям Турции, являющейся членом НАТО и стремящейся с помощью этой империалистической организации осуществить свои собственные захватнические планы в отношении соседних стран и особенно — арабских. Определенное внимание в статье уделяется издаваемой в Турции пантюркистской литературе, в которой красной нитью проходит реакционная идея превосходства турка над другими народами. Показывается, что классовая причина живучести идеологии тюркизма и пантюркизма кроется в реакционной сущности антидемократического, антинационального буржуазно-помещичьего строя современной Турции.